

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 11, 12

ՆՈՅՏԵՄԲԵՐ — ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԽԸ. ՏԱՐԻ 1934

### ՄՈՎՍԷՍ Գ. ՏԱԹԵԻՆՅԱՆ ԿԸԹՈՂԻԿՈՍ

ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՀՈՒԱՆ ՅՕՕԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

(Շարունակուիլիս է վերջը)

21. ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՂԵՐՍԸ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԵՏ

Անշուշտ ծանօթ էր Մովսէս այն թղթակցութիւններուն, որոնք կը փոխանակուէին Մեղքիսեղեկ կաթողիկոսի եւ Հոռոմայ Աթոռին միջեւ: Ինքն ալ ուղեց պահպանել կապ Ս. Աթոռին հետ:

1612ին, երբ Չաքարիա վանեցի Հոռոմէն կը վերադառնար Կ. Պոլիս քահանայապետական թղթերով եւ ընծաներով, որոնք պիտի յանձնուէին Մեղքիսեղեկ կաթողիկոսին, նոյն քաղաքին մէջ էր Մովսէս: Տեսաւ եւ լսեց այն վէճերը, որոնք ծագեցան Չաքարիայի եւ Գրիգոր Կեսարացոյ միջեւ: Կեսարացին, որ Մովսէսի «հողեւոր հայրն» էր, ոգւով չափ հակառակ էր «Փոռնիկներուն», որոնց հետ միուլթեան կը ձգտէր Չաքարիա: Թէ ի՞նչ ընթացք բռնեց Մովսէս այս վէճերու հանդէպ, չգիտենք: Բայց կը տեսնենք իր հայրենիք վերադարձէն ետքը, որ իր տեսութիւնները բազմօք կը խոտորէին Կեսարացոյ տեսակէտներէն: Անիկա կ'ապրէր թէ Նախիջևեանի կաթողիկէ Արքեպիսկոպոսին հետ եւ թէ Սպարթի Կարմեղեանց հետ բարեկամական, նոյն հետ միտերմական յարաբերութեան մէջ: Իսկ սիրտ մտերմական յարաբերութեան մէջ:

Իւր տեսակէտները եկեղեցիներու յարաբերութեանց մասին գեղեցիկ գծած է Մովսէս 1632, Օգոստոս 30ին առ Վլատիսլաւ 1-է հաց թագաւորն դրած թղթին մէջ, ուսկից կարելոր կը համարիմ յառաջ բերել հետեւեալ տողերը:

«Եղեցի սէր եւ խաղաղութիւն ի միջի մերում. քանզի Աստուած սէր է. եւ որ կայ ի սէրն՝ բնակի յԱստուած եւ Աստուած ի նմա»:

Քանզի կան բազումք, որք ոչ են տեղեակ սիրոյս այս. հակայ բանիւք վիճին ընդ միմեանս՝ տակաւի. Ես Պողոսեան՝ եմ եւ ես Ապողոսեան՝ եմ. եւ միւսն թէ ես Կեփայեան, Իսկ մեք զպատուէր սրբոյն Պողոսի լսել հայցեմք ի ձէնջ. Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցաւրուք, զՔրիստոս զղեցեալ էք. չիք լստիր ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի, ոչ արուի եւ ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս: Քանզի եւ ի մերումս երկրի ի մեր վիճակս՝ Փոռնիկ դաւանութեամբ քրիստոնեայք շատ կան. մեք՝ յիւրեանք բան չենք ասել. քաւ լիցի. այլ իբրեւ զեղբարս ընդունիմք եւ պատուեմք. այլ եւ եկող պատրիքն երբ առ մեզ կու գան, որչափ մեր կարս է՝ պատիւ եւ մեծարանս կ'առնեմք, վասն սիրոյն Քրիստոսի<sup>1</sup>»:

Այս հանդուրժողական հոգին աչքի կը զարնէ Մովսէս կաթողիկոսի կեանքին մէջ. նոյն հոգւով դրուած են նաեւ հետեւեալ տողերը, ուղղուած առ Աւդոստինոս Բաջենց Նախիջևեանի հայ Միաբանողներու արքեպիսկոպոսը. «Դու գիտակ ես որ մենք ձեր պատրոնց որչափ հարկիս հանեմք: Այլ խնդիրք մեր ի քեզանէ այս է որ... հրամանքդ գահամաթիս, գրես առ Փափն եւ ծանուցանես մի ըստ միջէ զմեր լաւութիւնն որպէս գիտակ ես»<sup>2</sup>:

Իր վերաբերմունքը դէպի լատին առաքելները եւ Երնջակի կաթողիկէ Հայերը եղած է միշտ եղբայրական: Երբ խօսքը դարձած է երկու եկեղեցիներու դաւանաբանական կամ ծիսական խտրութեանց շուրջը, ջանացած է ինքը խոհեմութեամբ եւ իմաստութեամբ ցրուել թիւրիմացութիւնները, որոնք մէկ կամ միւս կողման մէջ այս կամ այն կէտի նկատմամբ գոյութիւն ունեցած են, եւ կամ լուծումը սիրոյ մէջ գտնել:

<sup>1</sup> Կամենից, էջ 243:

<sup>2</sup> Հանդ. Ամս., 1934, էջ 23:

Մովսէս եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ընդունելէն ետքը երբ հրաւիրուեցաւ Նոր Զուղայ, ունեցաւ առիթ տեսնուելու հոն տեղւոյն լատին առաքելներու հետ: Շատ կանխակալ կարծիքներ տեղի տուին: Զգաց ինքն ալ հայ եւ լատին եկեղեցիներու մերձեցման, բարեկամական ազդերի հարկաւորութիւնը: Անջատման դժեբը չհամարեցաւ այնքան կարեւոր՝ կարեւորագոյնէն հրաժարելու համար: Նախ անձամբ տուաւ իւր հաւանութիւնը ենթարկուելու Հռովմայ Ս. Գահին ճութութեան եւ ապա խոստացաւ վէճի առարկայ կէտերը զնել եպիսկոպոսներու ժողովի քննութեան:

Տրամադրութիւններու հոսանքի մասին, որ կ'իշխէր յատկապէս ի Նոր Զուղայ, գեղեցիկ կը գրէ Բոկոտոն Կարմեղեանց մեծաւորն Ֆրա Եւզինիոս զի Սան Բենեդեկտոս, որ 1624—1626 տարիներուն այցելած էր իւր Կարգին առաքելութիւններն ի Պարսկաստան, Ս. Ժողովին առջեւ դրած իւր Տեղեկագրին մէջ (24 Փետր. 1627) <sup>3</sup>.

«Շատ կը փափագին (Նոր Զուղայեցիք) միանալ Հռոմէական Եկեղեցւոյ հետ, որուն վարդապետութիւնը առ հասարակ կ'ընդունին, համարելով թէ հոն որ եւ է մոլորութիւն չկայ. թէպէտ անոնց ըսելու կերպէն կ'երեւայ թէ ի Գրիստոս մի բնութիւն կը խոստովանին, սակայն հասկնալու եւ մեկնելու կերպին մէջ մերինէն չեն տարբերի. որովհետեւ կ'ըսեն թէ ի Գրիստոս մէկ բնութիւն միայն կայ, բայց առանց այլայլման, այս ինքն բաժանման. այնպէս իմանալով թէ ստացուած բնութիւնը չ'այլայլէր աստուածեղէն բնութիւնն, որ կայ ի նմա էպպէս:

«Սովոր են ըսել թէ Ֆրանկներն եւ Հայերը երկու սիրելի եղբայրներ էին, որոնք շատ ժամանակ յառաջ բաժնուած են իրարմէ եւ հեռացած. այժմ նորէն մերձեցած են ընդգրկելու զիրար անպատում ուրախութեամբ: Այս նմանութեամբ կ'ուզեն արտայայտել այն մեծ փափագը, զոր ունին կաթողիկէ Եկեղեցւոյ հետ միութեան մէջ ապրելու համար. յայտնապէս կ'ըսեն թէ իրենք չունին մասն եւ բաժին անոնց հետ, որոնք հերձուածին եւ բաժանման պատճառ եղած են. եւ թէ այնպիսիները այս նկատմամբ Տեսան Աստուծոյ խիստ հաշիւ պիտի տան:

<sup>3</sup> Գիւան Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին. Հատար 189 (Lusitania, India et Japonia, 1629), էջ 258—259:

«Ոմանք կը փափագին Հռոմ գալ եւ ճանչնալ նորին Սրբութիւնն եւ անոր ստքը համբուրել: Չեմ կասկածիր թէ երբ իրենց եւ առաքելական Աթոռի միջեւ դիւրանան հաղորդակցութիւնները, եւ բացուի Հռոմի մէջ տուն կամ դպրոց, ուր հնարաւոր ըլլար այս ժողովրդեան պատանիներէն ոմանք ուսուցանել վարդապետութեամբ, օրինակով եւ խօսքով, լաւագոյնս պիտի ճանչնան իրենց մոլորութիւններն եւ ուրախութեամբ պիտի դառնան ի փարախ Ս. Եկեղեցւոյ. ինչպէս նաեւ անոնց միջոցով հնարաւորութիւն պիտի ըլլայ ապա շահիլ այս կողմի մահմեդականները եւ հեթանոսները. որովհետեւ Հայոց վարդապետները, զորոնք վերագոյն յիշեցինք, շատ յարգուած են Պարսից Շահէն. անոնց ամէնուն գլուխն է Մովսէս վարդապետ, մեր Հայրերուն մեծ բարեկամը (gran parziale), որ իմ ձեռքովս ստացաւ Նորին Սրբութեան նամակները: Հաւանօրէն անիկա պիտի ընտրուի Հայոց կաթողիկոս. անիկա այս մասին արդէն ներկայացուցած է ինդրագիր մը Պարսից Թագաւորին, եւ յոյս կայ թէ երբ Շահը Բարելոնը (Բաղդատը) նուաճելէն ետքը վերադառնայ Ասպահան, պիտի կատարուի այս խնդիրը»:

Մովսէս առանձին չէր. իրեն հետ էին իր աշակերտները, յատկապէս Սաչատուր Կեսարացի եւ Արիստակէս վարդապետ. համամիտ համակարծիք էր անոնց Սոջայ Նազար, որուն սիրալիւր վերաբերմունքը հանդէպ լատին առաքելներու, գտած էր ի Հռոմ հաճութիւն եւ Ս. Ժողովը իւր Նիստերուն մէջ զովութեամբ եւ շնորհակալութեամբ կը յիշէ անոր այս բարեացակամ ընթացքը:

Ս. Ժողովը չէր գոհանար սակայն հայ վարդապետներու բերանացի եւ գրաւոր խոստումներով, որոնք կը հասնէին ստէպ Հռոմ ի մասին միութեան. կ'ուզէր տեսնել միութիւնը Փլորենտեան Ժողովի Համաձայնութեան կամ Եւզինիոս Գ.ի Հրահանգներու հիման վրայ:

Կարմեղեանց հետ մշակուած մտերիմ յարաբերութիւնը թելադրած է Մովսիսի անձամբ թղթակցիլ Ս. Քահանայապետի հետ, պարզելու Ս. Աթոռին առջեւ էջմիածնի Եկեղեցւոյ պէտքերը:

Ծիրանաւորն Մելինոյ Ս. Ժողովի 13 Յունիս 1625 գումարուած Նիստին մէջ, կը հարգէ Ս. Ժողովոյն ի բանից Կարմեղեան Հ.

Պրոսպերի a Spiritu Santo ի Սպահան հետեւեալը <sup>4</sup>.

«... ք. Նկատմամբ այն եկեղեցական զգեստներու, որոնք խնդրուած են Հայոց վարդապետ կոչուած Մովսէս եպիսկոպոսի համար, որ կաթողիկէ Եկեղեցւոյ հետ բանիւ միայն միութիւն ըրած է. թող ինքն (Պրոսպեր) կամ Հարք (նոյն վանից) փորձեն, թէ կարելի չէ՞ արդեօք, որ նա (Մովսէս) նոյնը գրով ալ ընէ: Նորին Սրբութիւնը կը խոստանայ տալ զգեստներ, պայմանաւ որ անոնք յիշեալ եպիսկոպոսին իւր (Քահանայապետին) անունով այն ատեն միայն շնորհուին, երբ հաւատոյ դաւանութիւնը դրաւոր ալ տուած է. աւելազգ կարող են Կարմեղեանները իրենց աւուրով յանձնել զանոնք (Մովսիսի)»:

«Գ. Ի մասին այն Հրահանգաց կամ Քրիստոնէական մատենին, զոր խմբագրած են Հայերը Քաղկեդոնի ժողովէն ետքը նոյն ժողովին վարդապետութեան ղէմ. եւ զոր յիշեալ վին վարդապետութեան ղրկած է, եպիսկոպոսն Մովսէս վարդապետ ղրկած է, հրապարակել անոր պատասխան մը տրուի, հրապարակել Ս. Ժողովը, որ նոյնը հայերէնէ լատիներէն թարգմանուի եւ յանձնուի քանի մը ուսակալ անձանց, որպէս զի անոր (բովանդակութեան) մասին զեկուցում տան»:

Յայտնի չէ թէ ի՞նչ եղաւ յանձնախումբի կարծիքը յիշեալ մատենին մասին կամ ի՞նչ պատասխան զրուեցաւ Մովսիսի:

Նոյն տարւոյն Օգոստոս 22ին գումարուած Նիստին մէջ կը յայտնէ նոյն Ծիրանաւորը <sup>5</sup>, թէ Ս. Ժողովը մէկ որոշումը «զրկուած է Պարսկաստանի առաքելութեան Հայրերուն, որպէս զի հոգ տանին որ արքեպիսկոպոսն Մովսէս վարդապետ եւ անոր պաշտօնեաները Այս կարեւոր է տալու համար թոյլտուութիւն, որպէս զի իրենք (առաքելները) Հայոց եկեղեցիներու մէջ եւ փոխադարձաբար Հայերը մեր եկեղեցիներու մէջ կարենան պատարագ մատուցանել»:

Կը տեսնուի ասկէ թէ ի Նոր Զուղայ միութեան հարցը արդէն տեսական զէպի գործնական քայլեր կ'առնէր:

Ունիմ աչքի առջեւ Մովսէս արքեպիսկոպոսի եւ Սաչատուր եւ Արիստակէս վարդապետներու առ Ս. Ժողովոյն. Հատար 3 (Ամբ 1622—1625), թղ. 233—234:

<sup>4</sup> Պրոք. Տ. Հ. Ս. Ժողովոյն. Հատար 3 (Ամբ 1622—1625), թղ. 233—234:  
<sup>5</sup> Անդ, թղ. 250:

պետներու առ Ս. Ժողովն դրած թուղթին պատասխանը, որ թուական կը կրէ 18 Փետրուար 1628: Այս պատասխանը գրուած է Մովսիսի, երբ նա էջմիածնի Լուսարար էր. իսկ Մովսիսի թուղթը պէտք է գրուած ըլլայ անոր երկրորդ անգամ Սպահան այցելութեան առթիւ: Ս. Ժողովին պատասխանն է:

Առ Մովսէս հայ արքեպիսկոպոս Մեծ եւ փոքր Սիոնի, եւ առ եպիսկոպոսն Խաչատուր եւ առ հայ վարդապետն Արիստակէս:  
(Prop. Lettere volgari, an. 1628, vol. 7, f. 18.)

Ձեր Սրբութեանց թուղթը նկատի առնուեցաւ Հ. Տ. Ս. Ժողովէն, որ գումարուեցաւ ի ներկայութեան Ս. Պապին Ուրբանոս Ը.ի. Նորին Սրբութեան եւ Տ. Կարգինալի. Նորին Սրբութեան հոգան այն սէրն եւ բարեկամութիւնը, զոր դուք ի հանդէս կը բերէիք հանդէպ այս սուրբ, առաքելական Աթոռին:

Նկատմամբ այն կէտերուն, զոր դուք կը շօշափէիք Ձեր Նամակին մէջ, ի մասին մեր Ս. Հաւատքի վարդապետութեան, կը յայտնենք թէ Ասպահանի Բոկոտոն Կարմեղեաններու մեծաւոր հայրը պիտի պարզէ Ձեր առջեւ Նորին Երջանկութեան եւ Ս. Ժողովոյն մտածմունքները: Առ այս կարեւոր երեւցածը գրուած է լիովին, յատկապէս թէ ինչ պէտք է ընէք Դուք Առաքելներու գլխաւորին Պետրոսի այս Աթոռին հետ հաղորդակցութիւն գտնելու համար, որմէ դուրս չկայ փրկութիւն. վասն զի, ինչպէս Առաքելալը կ'ըսէ. «Մի է հաւատք, մի մկրտութիւն, մի Աստուած» <sup>6</sup>. զայս անեղծ եւ առանց մոլորութեանց դաւանեցէք միշտ, ինչպէս դաւանած է եւ ունի այս կաթողիկէ Հռոմէական սուրբ Եկեղեցին, համաձայն Քրիստոսի Տեսան մեզու վարդապետութեան, որ կ'ըսէ Աւետարարոյ վարդապետութեան վասն քո՝ զի մի պահ կասեցեն հաւատք քո՝ եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեցիս զեղբարս քո» <sup>7</sup>: Սակայն եթէ Դուք լսէք այն ամէնը, զոր վերոյիշեալ մեծաւորը պիտի հաղորդէ Ձեզ, եթէ խոստանաք պահպանել Նորին Սրբութեան հետ այն դաշնադրութիւնը, զոր ունի այս ազնիւ եւ մեծաթիւ հայ Ազգը Ս. Սեղբեստրոս Պապէն, (տրուած) ի ժամանակս Ս. Գրիգոր Լուսա-

<sup>6</sup> Եփես. Գ. 5:  
<sup>7</sup> Դուկ. իբ. 32:







նա որ զատոյց եւ հեռացոյց զհերձուածողան ի ճշմարիտ եւ յուղղափառ հաւատոյս եւ ուրախ եղեւ ի վերայ նոցա»:

Թէ ի՞նչ պատասխանեց Մովսէս այս նամակին, յայտնի չէ: Բայց կ'ենթադրեմ թէ այս հարցին կը հայէր Յովհաննէս Մովսէսը, այն է Յովհ. Անկիւրացւոյ, Վենետաց դեսպանին թարգմանի գրուածքը, որ կը պահուի Ս. Ժողովոյն Դիւանին մէջ<sup>3</sup>. «Պատասխանի որ տայ Ֆոնանի Յոհաննի թղթաճան (իմա՛ թէրճիւմանն, իտալ. «risposto che dà Gio. Molino interprete») Կեսարացի Գրիգոր վարդապետին, որ այժմ պատրիարք եղեալ է այլազգեաց իշխանութեամբ ի վերայ Հայոց»:

Գրիգոր Կեսարացիէն ծանօթ է ինձ նաեւ հետեւեալ նամակը, գրուած էջմիածնի Միւրաններուն, 1630էն ետքը, հաւանօրէն երբ կենդանի էր դեռ Մովսէս կաթողիկոս:

Նամակին մէջ Մովսէս կաթողիկոսի անունը չէ յիշատակուած, եւ ոչ ալ անոր մահն, կամ յաջորդի ընտրութիւնը ակնարկուած: Առանց տարակուսի «բազում անգամ գրով եւ յանդիմանելով ծածուկ եւ յայտնի ծանուցի ձեզ, թէ այդ խորթ եւ նորածե բանիցը ի բաց կացէք, զի չէ դա ճշմարիտ ուղղափառաց, այլ Բաղկեղտնականացն» խօսքերը մասամբ առ Մովսէս ուղղուած մեղադրական թուղթը կը յարաբերեն: Նոյն թ. 1771 ձեռագրին մէջ (թղ. 301 ա եւ յԸ.) կը գտնուի երկրորդ, աւելի ընդարձակ թուղթ մ'ալ, զոր զբաժն է Կեսարացին առ Փիլիպպոս Կաթողիկոս, յանդիմանական շեշտով, ուր կ'ըսուի. «Վասն երկից իրաց զբեմ առ քեզ. նախ որ լսեցաք, թէ կամիք զհանապազօրդ պատարագն խափանել. երկրորդ՝ զքառասունք առնելն արգելէք»: Այս թղթին նոյնպէս ընդարձակ պատասխանած է Փիլիպպոս կաթողիկոս, տեղ տեղ նաեւ խիստ լեզուով:

Կը հրատարակեմ այս թուղթը այստեղ ամբողջութեամբ, իբրեւ պատմական յիշատակարան, որ կը սփռէ լոյս ժամանակակից բմբունումներու վրայ: Գրուածքիս մասին ակնարկութիւն ըրած է Մ. Սոստիկեան, Արարատ, 1902, էջ 1017. կը հրատարակուի առաջին անգամ այստեղ: Ձեռագրին մէջ անխորագիր է գրուածքս:

<sup>3</sup> Prop. Lettere di lingua straniera dall'anno 1622, vol 180, f. 139-143.

Թուղթ Գրիգոր Կեսարացւոյ առ էջմիածնեցիս:

(Ձեռ. էջմ. 1771, քղ. 295-298 ք.)

Իմացիք որ ճշմարիտ հովիւքն որքան էին յաշխարհի, զանիմաստն եւ զազգէտն ուսուցանէին. ընդ անկարգիցն կազէին. ընդ քանասարիցն<sup>4</sup> եւ ընդ գողոցն մրցեալ հալածէին. եւ այնու ոչ շատացեալ, այլ ճշմարտութիւն գրովք արձանացուցեալ. զի զկնի իւրեանց մի խանգարեալ բան ճշմարտութեան սուղեացի. եւ ստութիւն զօրացի: Այլ ես մեղօք զառաձեւալս Գրիգոր յորջորջեալս թէպէտ տակաւին կենդանի եմ, այլ ծերացեալ եմ, ի յանկնդան արանց գոլով. այլ սակաւ<sup>5</sup> ինչ ծանուցանեմ սուրբ էջմիածնին բնակչացը, զի թէպէտ Տէրն յետ երկու եւ երկից անգամ խրատելոյն անլուր եղելոցն բարուք զտարանջատելն վարկանէր արժան ի յօձարարոյցն, այլ պարզամտաց եւ աղանազունիցն եւ անմեղացն անդոյլ ուսուցանել ըստ Առաքելոյն. թէ Անչափ երկնեցից մինչեւ նկարեացի ի ձեզ Գրիստոս<sup>6</sup>:

Այլ թէպէտ բազում անգամ խրատեցաք բերան ի բերան ձերայնոցը<sup>7</sup> առ մեզ զիպելոցը ի մեր քաղաքն Կեսարիա Սազատունն եւ ի յայլ տեղիսն այլոց բազմաց. եւ թղթով եւս ծանուցաք վասն նորածե բանիցն եւ նոր ազանդոյն<sup>8</sup>: Այլ զարձեալ կրկնեցիք վասն երկից պատճառաց. նախ զիտեմ զի դուք զբարս աղանոյ ունիք. եւ էք միամիտք եւ ճշմարտութեան եւ բարեաց էք սիրող. կամիմ զի զպարզ բարին եւ ճշմարիտն հաստատեցի ի ձերում միջի եւ ոչ սուտն եւ անօգուտ բաղադրեալն: Երկրորդ զի բազումք ի ձէնջ կատարեալ են. թէպէտ՝ Ընդ անդամին, առ Իմաստունն, մի յաճախել զխօսս<sup>9</sup>, այլ Ձիմաստութիւն խօսիմ համարձակ ընդ ձեզ կատարելոցը<sup>10</sup> ըստ Առաքելոյն: Եւ երրորդ զի ես առաւել պարտական եմ խօսել ընդ ձեզ քան զայլսն. ըստ Առաքելոյն թէպէտ այլոց չիցեմ առաքեալ<sup>11</sup>, այլ զէպ ձեզ եմ. զի զվարդապետական իշխանութիւն եւ զայլ հոգեւոր պատիւս կամօք մերովք եւ ի մէնջ ըստացեալ էք. զի թէ լոնցից իբրեւ զՀեղի՝ վրիպակացն եւ ես զիպեցայց:

<sup>4</sup> Ձ. կարգէին ընդ քանասարիցն:  
<sup>5</sup> Ձ. սակայն:  
<sup>6</sup> Գաղատ. Գ. 19:  
<sup>7</sup> Ձ. ձերայնոցը:  
<sup>8</sup> Կ'ակնարկուի հաւանօրէն առ Մովսէս կաթողիկոս մեղադրական թուղթը:  
<sup>9</sup> Միքայ. ԻԲ. 14:  
<sup>10</sup> Ա. Կորն. Բ. 6:  
<sup>11</sup> Ա. Կորն. Թ. 2:

Իմացիք, սիրելիք, որ աղբ առնեմ ձեզ զի այդ նորածե աղանդն եւ մանաւանդ դաւանութիւնդ, որ յամենայն օր ասէք յառաւուտն եւ կեղոնի դաւանութիւն է: Նախ այն որ ասէ. Մեռեալ մարմնով եւ կենդանի աստուածութեամբն. զի ասէ սուրբ Հայրապետն Ներսէս ի կատարումն դաւանութեան իւրոյ, ի Սոստովանիմն<sup>12</sup>.

Ոչ ոմն անմահ եւ ոմն մեռեալ,  
Ձի այս երկուքն են բաժանեալ.  
Այլ որ անմահ, նոյն եւ մեռեալ.  
Եւ որ մեռեալ՝ անմահ մնացեալ.

Գի Որպէս ծընունդն սքանչելի  
Նոյնպէս եւ մահն հրաշալի.  
Եւ երկրքեանն անքննելի,  
Ձի Աստուծոյ է արարչի՞

Ով սիրելի, դու ասես՝ Մեռեալ մարմնով եւ կենդանի աստուածութեամբ, զի ջուր կողին Գրիստոսի զմեռելութիւն մարմնոյն նշանակէր. եւ արիւնն զի՞նչ նշանակէր. թէ ասես<sup>13</sup> զկենդանութիւն անմարմին աստուածութեան, նա անմարմին աստուածութիւն ոչ ունի արիւն, այլ մարմին էր կենդանի. որպէս վերոյ ասաց. որպէս ասէ. Մեռով բնութեամբս մեռանի, Աստուած ասէ. Սոստովանի. զայդ հերձուածն ոչ ընդունէ ի դաւանութիւն Նիկիայի. զի ասէ միայն զունէ ի դաւանութիւն Նիկիայի. զի ասէ միայն զասէ Ձարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերգայս թէ Ձարչարեալ. եւ Ներսէս ասէ. Սարրոք աւուր յարուցեալ. եւ Ներսէս ասէ. Սարրոք չեցար, թաղեցար եւ յարեար: Եւ թէ կամիս զդորա չար հերձուածն իմանաս, գնա եւ տես զդորա չար հերձուածն իմանաս, գնա եւ տես զպահայ՝ մակտացական բնութիւն լինի», որնապէս ասէ Արիստոտէլ ի Հակակոսյս յեթնեւորդ ճառին, զոր փիլիսոփայն Գալիթ տարալուծէ. «Թէպէտ եւ ունակութիւն եղեալ ի նմա տարրացի. եւ զժոխաշարթ<sup>16</sup> եղիցի ի յոգնամանակն գոլոյ»<sup>17</sup>:

Իմացիք զի ոչ կարեմ յայտնի հրատարակել զանկարգութիւնս ձեր. զի ուրեք<sup>18</sup> ասէ զիրս աստուածաշունչ՝ Չառականս ազգի քո զիրս աստուածաշունչ՝ Ձատականս ազգի քո մի յայտնեացես<sup>19</sup>. այլ վասն Աստուծոյ փութացուք հետեւիլ ճշմարտութեան. դուք մի կարծէք թէ նոցա սեթեւեթեալ խարբայութիւն զձեր սիրտն միայն է հաւանեցուցեր եւ

<sup>12</sup> Ներսիսի Ծնորհաւոյ Չափարեարակնք: Վենեալի 1830, էջ 210. Բան Հաւատոյ, տ. 1068-1075:  
<sup>13</sup> Ձ. ասէ:

անգամ սրբեցին սուրբ հարքն, ոչ գոյ գերբ Հայոց, որ ոչ երեւի որոմն ինչ ի Բաղկեղտնականացն. զի բազում անգամ Բաղկեղտնականքն իբրեւ զաւճածուկ խառնեալ ի Հայք եւ պղծեալ, երբեմն ի ժամանակս Հերակլայ, եւ որ վեց կաթողիկոսք ՁԴ ամ թիւրեցան: Եւ որ վեց լինէր<sup>14</sup> յաւուրս Լեւոնի իշխանին երբեմն լինէր<sup>15</sup> յաւուրս Լեւոնի իշխանին երբեմն, որ երկոտասան եպիսկոպոսք կրկնակից կամեցան. յորոց մի էր Ներսէս դաշնակից կամեցան. յորոց մի էր կամաւ, Լամբրոնացի, կամաքարչեալ եւ ոչ կամաւ, սրպէս հրամայէ Կիրակոս կոչեցեալ պատմաւոր<sup>15</sup>: Եւ է որ ի ժամանակս ի յատիճանաւորացն Հայոց՝ որ չեն տունկ երկնաւորին՝ խելեալ ի բաց կորնչին ի գաւթէ սրբոյ Եկեղեցոյ, որպէս Յոհաննի Մործորեցին եւ աշակերտքն Սարգսի վարդապետի. եւ միշտ ցանկն զորոմն չարացն, որպէս ի մերում ժամանակի անիծեալ Նիկոն Լեւոնի եւ շնծեր Յոնանէս Սուրբ Կոստանդնուպոլսեցի: Եւ է որ սերմանեն միշտ զանխարար ծահուկքն, որք են վարժ լեզուիս եւ գրոց Հայոց. որ բազում անգամ ի մերում աւուրս Եձ եւ այլ աւելի փոքրիկ տետրակս զրեալ Հայոց գրով զհերձուածողական դաւանութիւնս իւրեանց եւ բերեալ շողորդելով ցրուեալ ի մէջ Հայոց. եւ եւ գրեալ ի մէջ սուրբ գրոց եւ ասեն միշտ որպէս զդաւանութիւն ուղղափառաց: Եւ կու լուծուի ի մէջ ի բաց հերքել, մինչդեռ նոր փութեմ ի մէջ ի բաց հերքել, մինչդեռ նոր է եւ ոչ է հնացեալ եւ տարրացեալ, զի դու է լուծանի. զի «կրթութիւն բազմաժամալուծեալ՝ մակտացական բնութիւն լինի», որնապէս ասէ Արիստոտէլ ի Հակակոսյս յեթնեւորդ ճառին, զոր փիլիսոփայն Գալիթ տարալուծէ. «Թէպէտ եւ ունակութիւն եղեալ ի նմա տարրացի. եւ զժոխաշարթ<sup>16</sup> եղիցի ի յոգնամանակն գոլոյ»<sup>17</sup>:

Իմացիք զի ոչ կարեմ յայտնի հրատարակել զանկարգութիւնս ձեր. զի ուրեք<sup>18</sup> ասէ զիրս աստուածաշունչ՝ Չառականս ազգի քո զիրս աստուածաշունչ՝ Ձատականս ազգի քո մի յայտնեացես<sup>19</sup>. այլ վասն Աստուծոյ փութացուք հետեւիլ ճշմարտութեան. դուք մի կարծէք թէ նոցա սեթեւեթեալ խարբայութիւն զձեր սիրտն միայն է հաւանեցուցեր եւ

<sup>14</sup> Ձ. լինէի:  
<sup>15</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 76 (տպ. Վենետիկ):  
<sup>16</sup> Ձ. զժոխաշարթի:  
<sup>17</sup> Մեկնութիւն Ստորդուլեանցն Արիստոտէլի ի Գալիթ, էջ 438 (տպ. Վենետիկ):  
<sup>18</sup> Ձ. իմեք (ուրեք):  
<sup>19</sup> Հմմտ. Ղեւոն. ԹԲ. 7:









օթեան մը դոյնն ինչ կերպով հիւրասիրելու համար այն հայերը, որոնք երբեմն երբեմն կու գան սուրբ տեղերը այցելելու համար :

Այս դործին հոգը յանձնուած է Միրայի Գեր. Արքեպիսկոպոսին, որ Նորին Երանութենէն ընտրուած է մէկ եւ միւս Հայաստանի արքեպիսկոպոսին առնթերակայ ապագայ յաջորդութեան իրաւամբ: Անիկա այդ տեղ կու գայ՝ արեւելեան Հնդկաստանի ճամբով երթալու համար իւր դահանխատ վայրը: Պիտի գայ Ձեր Սրբութեան, որպէս զի ներկայացնէք զինքը կաթողիկէ թաղաւորին եւ միջնորդէք, որ Նորին վեհափառութենէն որ եւ է նպաստ մը ստանայ. որովհետեւ այն գումարը, որ այն Դպրոցին համար երբեմն երբեմն պիտի մատակարարուի ասկէ, պիտի չկարենայ բաւական ըլլալ: Այս կէտի մէջ պէտք է Ձեր Սրբութիւնը նպաստամատոյց ըլլայ յիշեալ Գերասայծառին, այնպէս ինչպէս Դուք ի դէպ եւ պատշաճ կը համարէք. կարող էք գործածել նաեւ Մեր Տեսոն եւ Ս. Ժողովին անունը: Ապացուցուցէք Նորին վեհափառութեան, թէ որչափ հաճելի պիտի ըլլայ Աստուծոյ անոր այս առատաձեռնութիւնն եւ մեծանձնութիւնը այսպիսի կարեւոր գործի մը համար, որ կուչուած է փրկել մեծաթիւ հայ ժողովուրդը, որ պէտք ունի օգնութեան. յիշեցուցէք դարձեալ Նորին վեհափառութեան այն փառքը, զոր պիտի գանձ այս Ազգին քով, որ թերեւս անօգուտ չըլլայ իր ժամանակին նաեւ Սպանիոյ թագին համար. եւ վերջապէս ըրէք այն ամէնը, ինչ որ յարմար թուի Ձեր խոհմութեան եւ կարող է նպաստաւոր ըլլալ յիշեալ Գերասայծառին:

Հոռոմ, 19 Յուլիս 1624:

Զիտտաղինի ունէր Ս. Ժողովէն յանձնարարական մ'ալ Սպանիոյ արքեպիսկոպոսի Լուիլի դէ Գամայի անուան վրայ, տրուած 19 Յուլիս 1624ին<sup>6</sup>:

Ժամանակակից մը՝ Կղեմէս Գալանոս կը գրէ Զիտտաղինի այս նոր առաքելութեան մասին<sup>7</sup>. «Ձեռնադրեցաւ եպիսկոպոս նախ Միրայ քաղաքին, եւ յետոյ Նախիջևանայ գաւառին: Իսկ առաջ քան զգնան յիւր եկեղեցին (ի Նախիջևան)՝ դիմեաց ի Արեւմտեան Հնդկիս առ ի Ժողովել զոգորմութիւնս վասն պիտոյից եկեղեցւոյն իւրոյ: Բայց զբազում

<sup>6</sup> Prop. Lettere volgari, an. 1623—1624, vol. 3, f. 131.

<sup>7</sup> Միարանութիւն, Ա., էջ 525:

արծաթս եւ ոսկիս անդ ժողովեալ՝ մինչ գետ յետս դառնայր յիտալիա, մեռաւ ընդ ճանապարհ ի Սպանիոյ աշխարհին. եւ եթող դամենայն արծաթսն վասն հիմնելոյ Դպրանոցին Հայոց ի մայրաքաղաքին Հոռովմայ, զորոյ շինութիւնս այժմ (1634<sup>8</sup>) սուրբ Ժողովն, որ է սակս Հաւատոց, խորհի ի կեր արկանել»:

Զիտտաղինի մահը պատահեցաւ 1627ին: Ակնարկուած գումարը, զոր հանգանակած էր յԱրեւմտեան Հնդկաստան, էր 2212 reale. զոր բերաւ հասցուց Հոռոմ Ioan. Baptista Durali, ինչպէս կ'ըսուի Ս. Ժողովի Գործոց մէջ<sup>8</sup>:

Յայտնի է թէ Զիտտաղինի ինչ արդեւքի բախեցաւ ի Գոա եւ ինչո՞ւ կը վերադառնար Իտալիա:

Ս. Ժողովը միւսանգամ դարձաւ նախկին՝ Դպրանոցը Հոռոմ բանալու ծրագրին: 1627 Հոկտեմբեր 9ին Տոռնիէլլօ քարտուղարը կը կարգայ Ս. Ժողովի ՁԲ. Նիստին<sup>9</sup> մէջ «Հայոց համար Դպրանոց մը բանալու վերաբերեալ զրութիւններն եւ Հայոց Հիւրանոցի (hospitium) կանոնադրը, Գրիգոր ԺԳ. ի նոյն Դպրանոցի կառուցման մասին կոնդակը, զոր մահուանէն 5 ամիս յտաջ հրատարակած էր, . . . եւ ի վերջոյ Ս. Ժողովի 1623 տարւոյ հրամանագրերը, որով նոյն ազգին համար Հայաստանի մէջ բացուելիք Դպրանոցին ի նպաստ տարեկան 150 սկուզ կը նշանակուէր: Մեծապայծառ Հարք յանձնեցին յիշեալ Վեր. Տեղեկատուին, որ Հայոց Հիւրանոցին եւ անոնց Եկեղեցւոյն եւ Հիւրանոցին վերաբերեալ տունները այցելէ եւ անոնց մտից եւ ելից մասին հաւաստի տեղեկութիւններ հաւաքէ. եւ ապա Մեծապ. Տ. Բուրգելիօ կարդինալին՝ Հայոց պաշտպանին յայտնէ Ս. Ժողովին դիտաւորութիւնն եւ բաղձանքը եւ հարցնէ թէ Հիւրանոցին եւ անոր պաշտօնեաներու համար եղած ծախքէն զուրս կ'աւելնա՞յ գումար մը, զոր հնար ըլլայ այն հայ պատանիներու համար գործածել, որոնք կաթողիկէ հաւատքի, լատին լեզուի եւ ուսմանց մէջ կը կրթուին. որովհետեւ Ս. Ժողովը գիտակից իր պարտականութեան կը խորհի գէթ այժմ բանալ քանի մը հայ պատանիներու համար փոքր Դպրանոցի մը սահմանի մէջ տուն մը, մինչեւ որ Աստուծոյ օգնութեամբ աւելի լայն չափով միջոցներ գոյանան ամբողջական եւ կատարեալ Դպրանոց մը շինելու համար»:

<sup>8</sup> Acta S. C., an. 1631, sec. 170, p. 90.  
<sup>9</sup> Acta S. C., an. 1626—1627, vol. 4, p. 297.

Կարդինալ Բորգելիոյի հետ տեսակցութեան արդիւնքը նպաստաւոր եղած է: 1628, Փետր. 4ի Նիստին մէջ<sup>10</sup> կը յայտնէ Կարդինալ Ուբալդինօ, թէ Հայոց Դպրանոցի բացման համար կարելի պիտի ըլլայ Հիւրանոցի եկամուտէն 150 սկուզ ստանալ. 150 սկուզ պիտի տրամադրէ Ս. Ժողովը այն գումարէն, որ Նախիջևանի Դպրոցին յատկացուած էր: Ասոր վրայ որոշուեցաւ որ նոր բացուելիք Դպրոցին մէջ այնքան աշակերտ միայն ընդունուի, որքան կարելի է հոգալ 300 սկուզով: Այս որոշման վրայ էր Ս. Ժողովը երբ Հոռոմ հասաւ Հ. Յովհ. Թաղէոս Զուզայեցի խնդրադրներով ծանրաբեռնուած: Զուզայեցի կը փախազէին Հոռոմ հայկական Դպրանոց մ'ունենալ, ուր կարենային մեծ թուով հայ աշակերտներ զետեղուիլ: Անոնց խնդրադրը չունիմ տրամադրութեանս տակ: Ս. Ժողովը իւր 1630, Յուլիս 23ին գումարած մասնաժողովի մէջ խորհրդածութեան կ'առնէ Հայոց առաջարկը եւ հետեւեալ կը սահմանէ<sup>11</sup>.

«Զուզայի հայ իշխաններու փախադրին, որով կը բաղձան Հոռոմ հայ մանկուոյն կրթութեան համար Դպրանոց մը բացուած տեսնել, ժողովս կընայ գոհացում տալ, եթէ անոնք յանձն առնեն գնել Դպրանոցին համար կարեւոր չէնք ու կարասիները: Այն գումարը որ Ս. Ժողովս եւ Հոռոմի Հայոց Հիւրանոցը կարող են տարեկան տրամադրել, պիտի կարեւոր միայն հինգ ուսանող, անոնց վերակառուցման համար մ'ապրեցնել: Այս գումարը կը գոյանայ հետեւեալ կերպով. Միրայի արքեպիսկոպոսի գումարէն, որ 2000 սկուզ է, կարելի է տարին 100 սկուզ ստանալ. Նորին Սրբութեան տնօրինելով կարելի է նոյն նպատակին յատկացնել այլ եւս 70 սկուզ երկու կարդինալական մատանիներէն. դարձեալ նոյն կարդինալական մատանիներէն 250 սկուզ Դպրանոցի կընայ գործածուի այն 250 սկուզ գումարը, որ կընայ գոյանալ Հայոց Հիւրանոցի մուտքէն եւ վարձքէն, եթէ հաճի Նորին մուտքէն եւ վարձքէն ինչպէս շնորհուած ըլլալ Սրբութիւնը, այնպէս ինչպէս զարոցի կախը Գրիգոր ԺԳ. էն անդրիական դպրոցի կառուցման ժամանակ: Վասն զի Հայոց Հիւրանոցի մուտքը ըստ մեծի մասին ծառաներուն կը գործածուի, որոնք ըրածը անհշանակ բան է: Իսկ հայ ազգատներու համար, որոնք երբեմն Իսկ հայ ազգատներու համար, որոնք երբեմն Իսկ հայ ազգատներու սորվեցնել»:

<sup>10</sup> Acta S. C., an. 1628—1629, vol. 6, p. 10, հ. 29.  
<sup>11</sup> Acta S. C., an. 1630—1631, vol. 7, p. 101.

սկուզ ծախք ըլլայ: Այս ծառայութիւնը Դպրանոցն ալ կարող է ընել. եւ հիւրերը աւելի պատշաճ է Դպրանոցին մէջ ընդունել, քան այն Հիւրանոցի տան մէջ, որ տեղւոյն եւ տան անպիտանութեան պատճառաւ՝ աւելի շուներ քան մարդիկ պատասպարելու յարմար է»:

Նոյն տարւոյ Սեպտեմբերին գումարուած Նիստին մէջ ի դիտութիւն կ'առնէ Ս. Ժողովը մասնաժողովին հաղորդած տեղեկութիւնները եւ կու գայ հետեւեալ որոշման<sup>12</sup>. «Եթէ Հայոց Դպրանոցի համար կարեւոր չէնք, բնակարանն եւ կարասիները գնուին, կարելի պիտի ըլլայ անմիջապէս կազմակերպել 405 աշակերտի համար Դպրանոց մը, օգտուելով Միրայի արքեպիսկոպոսի դրամագլխին 150 սկուզ շահովն եւ Հիւրանոցի 250 սկուզ հասցովն, որ պաշտօնէից վրայ անօգուտ կը ծախսուի» եւն:

Ս. Ժողովը իւր 1633, Յունուար 5ին առ յոջայ Նազար Թղթին մէջ կը գրէր. «Կը մնայ այժմ, որ Դուք եւ Զուզայի հայ վաճառականները այս քաղաքի մէջ Ձեր Ազգին համար բացուելիք Դպրանոցի ի նպաստ ընէք այն, ինչ որ Ձեզ կ'իշխայ: Ես կը վստահացնեմ Ձեզ եւ հայ վաճառականներուն, որ այս պիտի ըլլայ ի մեծ ծառայութիւն Աստուծոյ եւ ի փառս եւ յօգուտ համօրէն հայ Ազգին» (§ 24):

Ս. Ժողովի տրամադրութեանց եւ որոշմանց մասին Զուզայեցիներու հետ բանակցութիւնները պիտի վարէր Յովհ. Թաղէոս Սպահանի եպիսկոպոսը: Անոր եւ Մովսէս կաթողիկոսի գրեթէ միաժամանակ վախճանելովը, բանակցութիւնները խափանուեցան: Զուզայեցիները լռեցին:

Մնաց Ս. Ժողովին վերադառնալ իւր նախկին ծրագրին, սահմանեալ թուով աշակերտներու համար միայն բանալ Դպրանոց մը, որչափ իւր միջոցները կը ներէին: Այս մասին 1633 Սեպտեմբ. 3ին կը գրէ Ս. Ժողովը առ Հ. Եմիլիօ Պորտելլի<sup>13</sup>. «Ս. Ժողովս կը խորհի ի Հոռոմ Հայոց համար Դպրանոց մը բանալ: Առ այս շատ պիտի ըլլար, եթէ Ձեր վերապատուութիւնը լատին լեզուն դասաւանդէ այն Յովհաննէս վարդապետին, որ Մովսէս կաթողիկոսին աշակերտն է. որպէս զի անիկա կարենայ յետոյ հոս գալ եւ նոյնը հայ աշակերտներուն սորվեցնել»:

<sup>12</sup> Prop. Persia etc., an. 1648 inclusive, vol. 209, f. 298.

<sup>13</sup> Prop. Lettere volgari, an. 1633, vol. 13, f. 92.



ձաշակի համար յառաջ կը բերեմ Ը . եւ Ժ . համեմատութիւնները .

«Ը . Զի յետ աւուրց ինչ տղան մկրտի ձեւամբ քահանային ի սուրբ աւագանն , շնորհօք որդի լինի Աստուծոյ եւ բնութեամբ՝ ծնողին : Նոյնպէս վարժապետն իմ փոխանակ մկրտութեան օրհնեաց զիս եւ ետ ի ձեռն իմ դասի զիրքն . եղէ որդի իւրն շնորհաւք :

Մեղաց որդին կրկնեալ ծնի .  
Ջուր ւ աւագան եւ սուրբ հոգի .  
Եղբայր անուամբըն՝ Բրիտանի ,  
Եւ բնութեամբն իւր ծնողի :  
Օրհնութիւն վարժապետի  
Համակ նրման աւագանի .  
Դասի զիրքն աշակերտի ,  
Նովաւ բնակէ ի սուրբ Հոգի :

Ժ . Թշուառութեան մահ այն է որ ծնողն երիտասարդական հասակն լինի կամ սուղ ինչ աւելի . եւ լինի որդի իւր ըստնդեայ . եւ զորն անկատար յանկարծ մահ հասանի իւրն . հայի տեսանէ զտղան իւր կաթնակեր ի լաց եւ ոչ կարէ օգնել . սիրտն ի կախ մեռանի . այս է թշուառութեան եւ լալու մահ : Ո՛վ մահ , դառն է յիշումն քո . որչափ յիշեմք զքեզ՝ քանց զուս զողամ :

Վա՛յ ասեմ այնպէս որդուն  
Որ անձատեալ ի մօր ծոցոյն .  
Ստեանց կարօտ որբացելուն ,  
Եւ թաղկացեալ ի մօր սիրուն :

Արդ այսպէս վարժապետն իմ Տէր Արապիոն եւ Գրիգոր կաթողիկոս Հայոց թշուառական մահուամբ փոխեցաւ եւ զմեզ որբացեալ եւ կաթնակեր եթող : Ո՛վ աստուածասէր Ժողովուրդք , ցուցէք ինձ . զմա՛յրն ամենեցուն լամք , թէ զտղան կաթնակեր» :

Ապա կը սկսի ողբալ երեք անձինքներով .

Ա .

Աչք իմ լուսաւոր ,  
զիա՛րդ խաւարեցար .  
Բագուկ իմ հրզօր ,  
զիա՛րդ յարմնիկ հատար .

Վ . Քնար . քաղցրախօս , երգարան Դաւթի ,  
զիա՛րդ անշնչացար :

Բ .

Աչքդ լուսատեսիլ սեղմեցաւ .  
Բերանդ քաղցրահամ խփեցաւ . . .

Վ . Քննութիւն յաշակերտացն խափանեցաւ :

Գ .

Ամայի եղեալ հօրէջ հեռացայ ,  
Որբացեալ որդեակս առ ո՛վ զարգանամ . .  
Վ . Քառեակ տասնակի եւ իննեակ ամի ,  
քաղցրութիւն սրտիս Տէրն իմ մեռանի :

Մեռանել ըզձամ հողով ծածկելու .  
զարչապար ոտից դժուխ բանակելու .  
Որոշեալ ստեանց պատճառ ինձ լալու .  
սիրելի բանբիչ մայրն է իմ պիտու .  
Վերացեալ աչացս կարօտ եմ տեսու .  
խաբեն զիս բանիւ նման տղայու :  
Մնուցեալ որդեակդ ի քէն արտաքու ,  
գէշ գէշ պատառի դազան ոտիսու .  
էրէկն եւ յեռանտ մտաբերելու .  
բարբառ ու խօսիցդ յունկանս լսելու .  
Սպասաւոր սրբի ըմպուն է շիրմու ,  
զատուցեալս ստենէ եզիք ի ծոցու :

Արդ եղբարք իմ սիրելիք , չէ պարտ մեզ անմխիթար լալ , այլ չափ եւ կշիռ : Եթէ թաւաւոր ոք սիրելեաց իւրոց առ ինքն կոչէ եւ ընտանիքնորա խնդան եւ ուրախ լինին . քանի՛ առաւել երկնաւոր թաղաւորն , որ այսօր վարժապետն մեր առ ինքն կոչեաց : Զէ պարտ մեզ սուղ առնուլ , այլ սակաւ մի լաց եւ աղօթք անդադար վասն փոշատեսակ մեղացն , որով փրկեացէ՛ Քրիստոս զամենսեանս . նմա փառք յաւիտեանս ամէն :

Ով ընթերցող , թէպէտ յետու գրեցաւ , սակայն առ ռոտ նորա էի մինչ ի փոխելն առ Քրիստոս . եւ յետու եղէ տատանման յօտարութիւն , որպէս որ բանս յիշէ :

Գրեցաւ ի մայրաքաղաքն յԱւրհայ . թվին ՌԾԶ . ի արաց (Մարտ-Ապրիլ) ամսու : Թվին ՌԾԵ . մեհեկի Ե (Ապրիլ 23) աւուր չորեքշաբթի եւ Հայոց գատիկ առաջի շաբաթու (23 Ապր . 1606 դշ . = 5 մեհեկի) , ի մետասան ժամու վարժապետն մեր աւանդեաց զհօգին սրբասնեալ :

Շարագրեալս պակաս է եւ թերի .  
Միտք իմ մոլորեալ խաւարաւ ծածկի .  
Ապակին ստակ յորմէ հայէի ,  
Վերացեալ աչացս այլ ոչ երեւի .  
Կերակուր կարծրագոյն չէ ինձ ուտելի .  
Կաթին փափաքիմ մօրն իմ ծնողի .  
Վարդապետ քաղցուն բաժակ բերկրալի .  
Աչացս լուս , սրտիս ըզձալի .  
Մարմինդ կոյս եզեալ ի շիրմի ,  
Հողիդ դասակցեալ նախնոյն Գրիգորի :

= Զեռագիրք՝ էջմիածին , 745 , 179բ—186բ (Ժէ) : Երուսաղէմ , 1042 , 48ա—52բ (1660° . վերջը պակաս) : Շաւարշ Վ . Սահակեան , յԵւզոկիւս , Տաղարան , Թ . 4 , էջ 81—103 (սկիզբը պակաս) . ասկէ արտագրութիւն մը հողացած է ինձԱւետիս Սահակեան (1913) : Ողբիս ամբողջութիւնը մտաղիր եմ հրատարակել այլուր :

2 . Օրհնութիւնք եւ Քաղուածք տօնից եւ տէրոնականաց եւ ամենայն սրբոց . զոր սահմանեաց սուրբ հայրապետն Մովսէս ի փառս Աստուծոյ :

ԳԿ . Երգեցէք որդիք Սիոնի : Էակից Հօր եւ Հոգւոյն . . . :

Զեռագիր՝ էջմ . 2412 , էջ 846—870 (Ժէ) : Այս աշխատութեանս մասին տես վերադոյն , Հանդ . Ամս . , 1933 , էջ 523—524 :

3 . Թուղթ առ Գրիգոր Կեսարացի : Տե՛ս այս թուղթն ամբողջութեամբ Հանդ . Ամս . , 1933 , էջ 175—178 :

4 . Թուղթ առ Աւգոստինոս Բաղենց , արքեպիսկոպոս Նախիջևանի :

Տե՛ս վերը , էջ 21—23 :

5 . Թուղթ առ Վլատիսլաւ Թաղաւոր Լեհաց . հմմտ . առ այս , էջ 23 :

6 . Թուղթեր առ Ուրբանոս Ը . , տե՛ս վերը էջ 25 եւ § 21 :

28 . ՆԿԱՐԱԳԻՐԸ

«էր սա այր մեծախորհուրդ եւ շինարար , պահող , ճգնող եւ արտասուեց , որորմած եւ զթած ի վերայ աղբասաց , մանուանդ թէ եւ գերեցոյ» : Ղուկաս զրէէ :

Մովսէս կաթողիկոս , ինչպէս աւանատեսները միտաբերան կը վկայեն , «էր ամենեւին պարզ բարոյիւք եւ ազատական մտօք , գեպարդ բարոյիւք եւ փառազարդ զեմօք վայելչագեցկազիր եւ փառազարդ զեմօք վայելչացեալ , զմիջինն ունելով չափ հասակին . եւ բողոքողին ներքին եւ արտաքին մարդով շնորհաւոր չաչուք եւ ճոխութեամբ արտափայլեալ» : Մովսէս Բլնեցի<sup>1</sup> , որուն են տողերս , կ'աւելուր թէ այն յատկութիւնները , «յորում յայոց (Աստուած) զտուրբն զիսահակ պարթեալիկն , համարեալիւր ըստ ամենայն բարունակ տեսութեան՝ բնականօք եւ մակտարցականօք առատացեալ գովարանութեամբ» կը գտնուէին յանձին Մովսէսի : Ուրիշ մերձաւոր մը կաթողիկոսին կը վկայէ<sup>2</sup> թէ «էր աւուր մը կաթողիկոսին կը վկայէ» :

<sup>1</sup> Զեռ . էջմ . , 981 . Արարատ , 1888 , էջ 417—418 :  
<sup>2</sup> Ղուկաս զրէէ . էջմ . 2372 , 355բ :

հարկու , տեսլեամբ զուարթերիս եւ վայելուչ հասակաւ , որպէս ճառի յաղագս սուրբ հայրապետին Տղայ տէր Գրիգորին եղբորորդոյն Ս . Ներսէսի» : Աւելի հատու է Նիկողայոս զրէի վկայութիւնը<sup>3</sup> . «որ ծաղկեալ է եւ բարգաւաճեալ բնական , բանական , կրթական իմաստութեամբ , մանաւանդ կրկին նորոգող եւ լուսաւորող հայկազուն սեռի» : Եթէ արտաքին մարդուն կը հային այս նկարագրականները , ուրիշներ չեն զանգիտեր նաեւ անոր ներքնոյն պատկերը զծել , վեր հանելու համար «առաքինի վարուք»<sup>4</sup> եւ «սրբասնեալ ճգնող կաթողիկոսը»<sup>5</sup> , որ «մաքրակենցալ է եւ սրբասնունդ , երկայնամիտ եւ ողորմած»<sup>6</sup> , «յոյժ խոնարհ եւ հեղ , առաքինի եւ սուրբ , կոյս եւ ընտիր»<sup>7</sup> , «պարկեշտ եւ սրբակրօն վարուք , խոշորագոյնս եւ պահեցող»<sup>8</sup> :

Կաթողիկոսի «գեղեցկազիր եւ փառազարդ զէմքը» , որ այնքան պատշաճած էր անոր «միջնաչափ հասակին» , թէպէտ ըստ արտաքին «հարկու» կ'երեցնէր իր անձը , բայց «բնական , բանական եւ կրթական իմաստութիւնը» , որով ծաղկած եւ բարգաւաճած էր , կը պարգեւէր իրեն զուարթերես տեսիլ , կ'ընծայէր զինքը «շնորհաւոր» , «ճոխութեամբ» պատկառաղբեցիկ , բայց եւ «պարզ» բնաւորութեամբը սիրելի եւ «ազատական մտքովը մոզիչ եւ «մեծախորհուրդ» իմացուածովը յանկուցիչ եւ համոզիչ : Թէպէտ մեծագոյն տոհմէ էր , բայց սիրեց պարզութիւնը . եւ պարկեշտ եւ սրբակրօն վարքովը ապրեցաւ աղքատին հետ ընտանի եւ մեծատունին հետ հաշտ : Որովհետեւ «խոշորագոյնս եւ պահեցող» էր , երեցաւ կենցաղասէրներուն անսիրելի . եւ չուզեց ինքն ալ հաշտութիւն կնքել անոնց հետ :

Մովսէս մանուկ հասակին նուիրուած Ս . Խորանի , փարեցաւ իւր կոչման ողբով չափ եւ միաց անոր հաւատարիմ մինչեւ իւր վերջին շունչը : Կամովին հրաժարած էր աշխարհէ եւ չնայեցաւ ետ . ունէր իրաւունք Խոջայ Նազար վկայելու անոր համար թէ «սա զաշխարհաւ եւ զըզձիւք նորին զանց արարեալ է»<sup>9</sup> : Անձնատուր բոլորանուէր Եկեղեցւոյ , ապրեցաւ անոր համար , անոր շահին , անոր պայծառու-

<sup>3</sup> Նիկողայոս զրէի 1632ին :  
<sup>4</sup> Թորոս Աղբար , Բ . 428 (ձաշոց 1630էն) :  
<sup>5</sup> Անդ . էջ 450—452 :  
<sup>6</sup> Առ . Դաւրիթեցի , 312 :  
<sup>7</sup> Սիմէոն Լեհացի , Ուղեգրութիւն . տե՛ս վերը , § 2 :  
<sup>8</sup> Առ . Դաւրիթեցի , 286 :  
<sup>9</sup> Անդ . 302 :

